ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

3 օգոստոսի չորեքշաբթի 2022
տպագրության ԺԱ տարի

113
(2593)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԸ ԽԱԲԵԼ Է. ՄԱՍ 60

«Ասում եք, որ էն պարգեւավճարները, որ իմ որոշմամբ հատկացվել է պաշտոնյաներին, կարելի էր հատկացնել թոշակառուներին: Ուրեմն այդ նպատակի համար տարեկան օգտագործվում է 1 մլրդ դրամ գումար». սրանք ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի խոսքերն են՝ ասված 2020 թվականի ապրիլի 6-ին, սակայն իրականությունը բոլորովին այլ է: Այսպիսով, որքա՞ն պարգեւավճարներ են բաժանվել 2020 թվականին. Ազգային ժողով՝ 1 մլրդ 416 մլն դրամ, ՀՀ ՊԵԿ՝ 5 մլրդ 578 մլն դրամ, Քննչական կոմիտե՝ 1 մլրդ 451 մլն դրամ, 12 նախարարություն՝ 5 մլրդ 90 մլն դրամ, ՀՀ ոստիկանություն՝ 8 մլրդ դրամ, եւ այսպես շարունակ: Ընդհանուր 25 մլրդ դրամ է կազմել պարգեւատրման ֆոնդը, այսինքն՝ իրականում պարգեւավճարների համար նախատեսված գումարները շատ ավելի շատ են, քան իր խոսքում ասում էր Փաշինյանը: Ինչպես հաճախ է պատահում, նույն Նիկոլ Փաշինյանը, դեռ 2018 թվականի հունվարի 17-ին բարձրացնելով պարգեւավճարների թեման, նաեւ հարց էր հնչեցնում, թե այդ դեպքում ինչ ուտեն աղքատները, եւ տարբերակներ թվում՝ խառը կանաչի, սխտոր, կանաչ սոխ, տաքդեղ: Սակայն հեղափոխությունից չորս տարի անց նա մոռացավ աղքատներին, թոշակառուներին օգնելու իր առաքելության մասին, թույլատրեց պարգեւավճարներ բաժանել ու բարձրացրեց նաեւ բարձրաստիճան պաշտոնյաների աշխատավարձերը, այնինչ երկար ժամանակ նա դեմ էր հենց բոլոր տեսակի պարգեւավճարներին: Կրկին խաբեց:



Պատմությունը վերջից սկսենք. երկնքից երեք խնձոր ընկավ՝ խաղաղության քարոզ անողի, դա լսողի, մեկն էլ 1990-ականների արցախյան ազատամարտի հաղթանակը կասկածի տակ դնող ՔՊ-ական պատգամավոր Արսեն Թորոսյանի գլխին: «Մեզ համոզել են մահ ընտրել»,- ասում է առողջապահության նախկին նախարար Արսեն Թորոսյանը՝ մի մարդ, որ ծնողներին իրենց մանկահասակ երեխաների համար դագաղներ գնելու խորհուրդ էր տալիս, մի մարդ, որ կորոնավիրուսի առաջին դեպքերն ի հայտ գալու ժամանակ սարկազմով էր պատասխանում լրագրողների հարցերին ու հանդիմանում, թե՝ «հիմա բոլորիդ վարակելու եմ»: Նա մի անձ է, որի կառավարման ժամանակահատվածում ՀՀ ամբողջ պատմության մեջ ամենաշատ մահերն են գրանցվել, մարդ, որի կնոջը պատկանող բժշկական կենտրոնը մինչեւ 2017 թվականը պետպատվերի գումար ընդհանրապես չի ստացել, բայց իշխանափոխությունից հետո պետբյուջեից ամենաշատ գումարներ ստացող կենտրոններից մեկն է դարձել (251,6 մլն դրամ՝ 3 տարվա կտրվածքով): Ու վերջապես նա մի մարդ է, որի «դարակազմիկ» մտքերն այս օրերին ողողել են ադրբեջանական լրատվամիջոցները, թե «հայ պատգամավորը խոստովանում է՝ 30 տարի առաջ սխալվել են»: Թեեւ մանկական դագաղների մասին խանդավառ հայտարարող մարդուց ի՞նչ սպասել:



Իշխանական պատգամավորները խորը թմբիրից արթնացել ու իմացել են, որ փողոցներում, մայթերում ինքնամոռաց կերպով ինքնագլոր վարող քաղաքացիները երբեմն վտանգում են մյուս քաղաքացիների կյանքն ու մարդկային եւ մեքենաների վթարների պատճառ դառնում: Վերջերս հրապարակվել էր, որ ինքնագլորներից տուժած մոտ 5 տասնյակ քաղաքացի է հոսպիտալացվել՝ տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներով: Եթե այս հանգամանքն է անհանգստացրել Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավորներ Վիլեն Գաբրիելյանին ու Զարուհի Բաթոյանին, ու որոշել են ինքնագլորների բերած վնասների մասին քննարկում կազմակերպել խորհրդարանում, ապա փառք տանք Աստծուն, որ քաղաքացիների առողջությունը նրանց գոնե անհանգստացնում է: Փաստենք՝ ինքնագլորների մասին միամտորեն կարծիք հայտնող իշխանավորներն անմեղի հայացք ընդունելու իրավունք պարզապես չունեն: Ինչու՝ քանի որ դրանք Հայաստան բոլորովին վերջերս են ներկրվել, ու եթե դրանց շարժի համար պատասխանատու մարմինները՝ ոստիկանությունը, Երեւանի քաղաքապետարանն ու էկոնոմիկայի նախարարությունը համապատասխան թույլտվություն չտային, ապա մարտկոցով գլորվող «սամոկատները» Երեւանի փողոցները չէին գրոհի, հետեւաբար պատգամավորների քննարկումը ուշացած է, զարմանքն՝ անտեղի: Ցանկացած երեւույթ ի սկզբանե պետք է քննարկել, հաշվարկել ռիսկերը, ապա նոր միայն թույլտվություններ ընծայել ու կանաչ լույս վառել: Իհարկե, բացառված չէ, որ իշխանավորները հերթական անգամ կարող են նախկիններին մեղադրել, որ, ենթադրենք, սաբոտաժ անելու համար հենց նրանք են դիտմամբ ինքնագլորների տակ նետվում (Աստված նրանց «հեղափոխական» երեւակայություն է տվել, չի խնայել), բայց փաստն այն է, որ դրանք ո՛չ նախկիններն են ներկրել, ո՛չ էլ, առավել եւս, դրանով իշխանություն վերցնելու հայտ են ներկայացրել: Դուք եք թույլ տվել. սեթեւեթանքը անտեղի է եւ չընկալվող:



Հայաստանի գործադիր մարմինը, արդեն որերորդ դեպքն է, օրենք է ընդունում, հետո՝ ձեռքերը լվանում, կամ էլ վերջնաժամկետ է նշանակում, բայց չի հաշվարկում, թե այդ որոշումն ինչպես է կատարվելու եւ ինչ հետեւանքներ կարող է ունենալ: Օրինակները բազմաթիվ են՝ պոլիէթիլենային տոպրակների վաճառքի արգելքը, սպանդանոցային պարտադիր մորթի մասին օրենքը, հանրային սննդի վայրեր, կինո, թատրոն մուտքը QR կոդերի հավաստման դեպքում: Հիմա հերթը գազաբալոնները պարտադիր փորձարկման ենթարկելու մասին օրենքինն է: Այս դեպքում սահմանվել է վերջնաժամկետ՝ օգոստոսի 1, սակայն արդեն երեք օր է, ինչ գազաբալոնների վկայագրման կայաններում իսկական քաոս է. մեծ հերթեր են, մարդիկ չեն հասցրել փորձաքննության ենթարկել գազաբալոնը: Այս հարցի ուղիղ պատասխանատուն՝ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունը, հեռվից լուռ հետեւում է իր կողմից ստեղծած շիլաշփոթին. չի հաշվարկվել, թե քանի ավտոմեքենա կա, քանի կայան կա, որը կարող է փորձաքննության ենթարկել գազաբալոնը, եւ ինչքան ժամանակ է պետք սպասարկելու համար: Բացի այս, պարզվում է՝ այս կառույցը չի համագործակցել գազալցակայանների հետ, որովհետեւ լցակայանները թվային համակարգին միացված չեն: Այսինքն՝ քաղաքացիներին կառավարությունը մղում է ապօրինությունների: Բացի այս, եթե գործադիրը օրենքն ընդունել է՝ օրենքի հիմքում դնելով անվտանգությունն ու մարդկանց կյանքին սպառնացող վտանգը, ապա փաստացի հերթի մեջ գտնվող քաղաքացու մեքենայի բալոնը, Աստված մի արասցե, կարող է մի օր պայթել: Իսկ ո՞վ է կրելու պատասխանատվություն:

ՆՈՐ ՃԱՆԱՊԱՐՀ

ԱԴՐԲԵՋԱՆՑԻՆԵՐԸ ՓՈՐՁՈՒՄ ԵՆ ԱՄՐԱՆԱԼ

Արցախի Հանրապետության հյուսիսային եւ հյուսիսարեւմտյան սահմանագոտու մի շարք հատվածներում երեկվանից՝ օգոստոսի մեկից, ադրբեջանական ստորաբաժանումները դիմել էին սադրանքի՝ կատարելով շփման գիծը հատելու փորձեր, որոնք կասեցվել էին ՊԲ ստորաբաժանումների ուժերով:

Ըստ Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության քարտուղար Տիգրան Աբրահամյանի՝ ադրբեջանցիների հերթական սադրանքը, այսպես ասած, միջանցքային տրամաբանության ու Արցախում հայկական զինուժի վերջնական բացակայության հետ է կապված:

-Պարոն Աբրահամյան, Արցախում երեկվանից լարված իրավիճակ է, այսօր էլ, փաստորեն, իրավիճակը չի փեխվել: Ձեզ ի՞նչ մանրամասներ են հայտնի:

-Գլխավոր խնդիրը այն է, որ Ադրբեջանը Հայաստանի իշխանություններին առաջադրելու է 2 պահանջ: Առաջինը հայկական ստորաբաժանումների դուրսբերումն է, իսկ երկրորդը վերաբերվում է միջանցքի տրամադրմանը: Առաջին հարցի հետ կապված, ըստ էության, 2020թ.-ից հետո զորակոչ չի եղել, պարտադիր ժամկետային զինծառայողները արդեն զինծառայությունը ավարտում են: Հայաստանից Արցախում զինծառայողներ չեն լինելու, այլ մենակ Արցախի գրանցում ունեցող քաղաքացիները. այս հարցը մեծ մասով լուծված է: Այս առումով Ադրբեջանը փորփրում է մինչեւ վերջ այնպես անել, որ, ժամանակը դեռ չլրացած, պարտադիր ժամկետային զինծառայողները դուրս գան: Երկրորդը միջանցքի հետ կապված գաղափարն է. Ադրբեջանը սպառում է ընդհուպ շանտաժի միջոցով ուժ կիրառել եւ հասնել Հայաստանի տարածքով դեպի Նախիջեւան միջանցքի գաղափարի իրագործմանը, հակառակ դեպքում Ադրբեջանը սպառնում է անցակետ դնել Լաչինի միջանցքում, որը, բնականաբար, հակասում է նոյեմբերի 5-ի փաստաթղթերին: Այն իրադարձությունները, որոնք նկատելի են Արցախի տարբեր ուղղություններով, հիմքում ունեն այս երկու հիմնական խորքային պատճառները:

-Անցակետ դնել Լաչինի միջանցքում. նոր կառուցվող ճանապարհի՞ մասին է խոսքը:

-Այս պահին խոսքը գնում է կոնկրետ գործող ճանապարհին, բայց Ադրբեջանը չի բացառում, որ նման քայլի կգնա նոր ճանապարհի կառուցման դեպքում: Իսկ այժմ նրանք ուղղակի փորձում են ամրապնդվել ճանապարհի այն հատվածում, որտեղով անցնելու է այդ ճանապարհը՝ նոր ճանապարհը:

-Այսինքն՝ մեր քաղաքացիները Արցախ մուտք գործելու համար ստիպված կլինեն ադրբեջանական անցակետով անցնե՞լ:

-Մենք խոսում ենք Ադրբեջանի ցանկությունների եւ պահանջների մասին, մենք դեռ չենք խոսում դրա՝ որպես փաստի մասին, բայց այն, որ Ադրբեջանը ձգտում է, դրա մասին անգամ հրապարակային հայտարարում են Ադրբեջանի պաշտոնյաները, որ նպատակը անցագրային ռեժիմն է, որովհետեւ նրանք անցագրային ճանապարհին փորձուն են միջազգային հանրությանը ներկայացնել, թե այդ ճանապարհը հայերը օգտագործում են զինծառայողների շարժի համար: Դրանով իսկ հիմք են նախապատրաստում, որպեսզի անցակետի գաղափարը որոշակի ընկալում ունենա դրսում, եւ դրանից բխող գործողությունները ընկալվեն դրսի համար:

-Դուք կապի մեջ եք լինում անընդհատ Արցախի հետ. այս պահի դրությամբ ինչպիսի՞ն է իրավիճակը Արցախում:

-Որքանով տեղյակ եմ, ռեժիմի խախտումների հետ համեմատելի վիճակ չէ, բայց, բնականաբար, իրավիճակը որոշակի դրությամբ պահպանվում է, եւ նոր սադրանքներ չեն բարձրացվում:

-Հիմնական ուղղությունը Վանք գյուղի շրջանո՞ւմ է:

-Իրադարձության ծավալները նաեւ Արեւշատ գյուղի ուղղությունն է, որը բավականին հեռու է Վանք գյուղից եւ Գանձասարի վանական համալիրից. ես կարծում եմ՝ հիմնական գործողությունների ուղղությունը եղել է Սաուղի հատվածում:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ԳԱԶԱԲԱԼՈՆՆԵՐԻ ՀԱՐՑԸ

ՀԵՐԹԱԳՐՎԵԼՈՒ ԺԱՄԿԵՏԸ ԱՆՑՆՈՒՄ Է

Արդեն մի քանի օր է, ինչ գազաբալոնային համակարգի լիցենզավորված կայաններում մեծ հերթեր են:

Տեղեկացնենք, որ երեկվանից, ըստ օրենքի պահանջի, մեքենայի գազաբալոնները չեն լիցքավորվելու, եթե տեղադրված կամ վկայագրված չեն լիցենզավորված կազմակերպությունների կողմից:

Վարորդները երեկվանից ճնշակայաններում ժամերով հերթ են կանգնում, որպեսզի իրենց մեքենայի բալոնը փորձաքննության ենթարկելու համար հերթագրեն: Դրանից հետո կայանը համապատասխան թուղթ է տալիս, որ մինչեւ փորձաքննությունը վարորդը հնարավորություն ունենա գազալցակայանում սպասարկվել: Ի դեպ, հերթագրվելու ժամկետը այսօրվա դրությամբ անցնում է 2023 թվականի փետրվար ամիսը:

«Էքսպերտ Թեչ» գազաբալոնների փորձարկման, վկայագրման եւ տեղադրման լիցենզավորված ընկերության տնօրեն Մկրտիչ Տիգրանյանը ArmLur.am-ի հետ զրույցում անկեղծացավ՝ նշելով, որ հերթերից հնարավոր էր խուսափել դեռեւս մի քանի ամիս առաջ:

«Խուսափել հնարավոր էր մի երկու-երեք ամիս առաջ, երբ որ մենք հերթագրման մեխանիզմն ասացինք, իրենք ասեցին, որ օրենքով նախատեսված չէ, եւ չենք անում: Հերթագրման մեխանիզմ մտածվեց հինգ-վեց օր առաջ»,- ասաց Մկրտիչ Տիգրանյանը:

Մասնագետը մեզ հետ զրույցում նշեց, որ երեկվանից գազալցակայաններում անհասկանալի վիճակ է: Արձանագրվել են դեպքեր, երբ գազալցկայանում չեն լցավորել անգամ փորձաքննություն անցած բալոնը:

«Կան գազալցակայաններ՝ երեւի 90-95 տոկոսը, որ չունեն համապատասխան տեխնիկա… Պետք է ունենան համակարգիչ, ինտերնետային կապ, պետք է համապատասխան դիմում-հայտ ներկայացնեն նախարարություն, որպեսզի ստանան գաղտնաբառ, որից հետո կարողանան մտնել բազա: Դրա համար ժամանակ է պետք»,- նկատեց մասնագետը:

Սակայն գազալցակայաններն այսօր միացված չեն թվային համակարգին, մինչդեռ այս համակարգի միջոցով լցակայանների աշխատակիցները հնարավորություն կունենան գազաբալոնների վկայագրումը ստուգել: Մեր զրուցակցի խոսքով՝ ճիշտ կլինի, որպեսզի առաջիկա օրերին պատկան մարմինները գազալցակայաններին վարչական պատասխանատվության չենթարկեն, մինչեւ ստեղծված խառնաշփոթը վերանա: Բայց, սրան զուգահեռ, նկատենք, որ խառնաշփոթ ստեղծած գերատեսչությունում՝ Տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարությունում, լուռ են:

ԾԱՎԱԼՆԵՐԸ ՆՎԱԶԵԼ ԵՆ

Պաշտոնապես Հայաստանում պղնձի եւ մոլիբդենի խտանյութի արտադրության ծավալները զգալի նվազել են: Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի տվյալներով՝ այս տարվա հունվար-մայիս ամիսներին, անցած տարվա նույն ժամանակահատվածի համեմատ, պղնձի խտանյութի ծավալները նվազել են 16.6, իսկ մոլիբդենինը՝ 5.3 տոկոսով:

Բացի այս, այս տարվա առաջին հինգ ամիսներին ցինկի խտանյութ եւս քիչ ենք արտադրել:

ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ՝ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻՆ

Կառավարությունը որոշել է փոխհատուցում տալ 44-օրյա պատերազմի ժամանակ վնասված ավտոմեքենաների սեփականատերերին: Նշենք, որ ռազմական դրության ժամանակ՝ ավտոմեքենաների ներգրավման ժամանակահատվածում տրանսպորտային միջոցներին հասցված նյութական վնասի դիմաց ֆիզիկական եւ իրավաբանական անձանց փոխհատուցում տրամադրելու վերաբերյալ նախագիծը Պաշտպանության նախարարությունը հանրային քննարկման է դրել:

Տեղեկացնենք, որ 2020 թվականին հայտարարված ռազմական դրության եւ զորահավաքի շրջանակներում ներգրավվել են ավտոմեքենաներ, որոնց ռազմական գործողությունների ժամանակ հասցվել է վնաս:

Ի դեպ, «Գույքի գնահատման եւ աճուրդի կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից տրված դրական եզրակացության համաձայն՝ թվով 11 անձանց փոխհատուցում կտրվի ընդհանուր 53 մլն 922 հազար դրամի չափով: Նշենք, որ 11 ավտոմեքենաներից 4-ն ընդհանրապես ոչնչացված են եւ առկա չեն, 7-ը վնասված վիճակով վերադարձվել են սեփականատերերին եւ կարող են օգտագործվել նպատակային նշանակությանը համապատասխան:

Այս նպատակով 2022 թվականի պետական բյուջեում առաջանալու է լրացուցիչ 53 մլն 922 հազար դրամ չափով ծախսերի կատարում, որը ՀՀ կառավարության պահուստային ֆոնդից հատկացվելու է Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը համապատասխան ֆիզիկական եւ իրավաբանական անձանց փոխանցելու համար:

ԲԱՐՁՐԱՑՐԵԼ ԵՆ ՏՈԿՈՍԱԴՐՈՒՅՔՆԵՐԸ

Երեկ տեղի է ունեցել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի նիստ, որի ժամանակ որոշվել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը բարձրացնել 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 9.5%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը սահմանել 11%, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 8%:

Այս մասին մամուլի ասուլիսի ժամանակ հայտարարեց Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի նախագահի տեղակալ Ներսես Երիցյանը:

ՊԱՊՈՅԱՆԸ՝ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Բարձրագույն դատական խորհուրդը երեկ Վերաքննիչ քրեական դատարանի նախագահ է ընտրել դատավոր Մխիթար Պապոյանին: Այս մասին տեղեկությունը Armlur.am-ի հետ զրույցում հաստատեց ԲԴԽ անդամ Գրիգոր Բեքմեզյանը: Հիշեցնենք, որ հուլիսի 18-ին լրացել է Վերաքննիչ քրեական դատարանի արդեն նախկին նախագահ Տիգրան Սահակյանի 65 տարին, իսկ ՀՀ սահմանադրությամբ եւ օրենքներով դատավորը կարող է պաշտոնավարել մինչեւ 65 տարին լրանալը, այսինքն՝ Տիգրան Սահակյանի՝ որպես դատավորի լիազորությունները դադարել են: ԲԴԽ նախագահը դեռեւս Գագիկ Ջհանգիրյանն էր, որպես Վերաքննիչ քրեական դատարանի նախագահի հավանական թեկնածու շրջանառվում էր դատավոր Սեւակ Համբարձումյանի անունը, սակայն Ջհանգիրյանի՝ լիազորությունների դադարումից հետո իրավական համայնքում որպես Վերաքննիչ դատարանի նախագահի թեկնածու ակտիվորեն սկսեց շրջանառվել Մխիթար Պապոյանի անունը, որը, փաստորեն, ընտրվել է նախագահ:

Ստացվում է, որ Գագիկ Ջհանգիրյանի գնալուց հետո ԲԴԽ-ում իրավիճակ է փոխվել, եւ ԲԴԽ անդամները ընտրեցին դատավոր Մխիթար Պապոյանին, որն այն դատավորներից մեկն էր, որ ահազանգում էր դատական համակարգում առկա վիճակի մասին եւ մի քանի այլ համարձակ դատավորների հետ միասին կռիվ էր տալիս դատական համակարգում անարդարությունների դեմ:

ԴԱՎԱՃԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՊՔ

Պետական դավաճանության դեպքով ԱԱԾ-ն հերթական քաղաքացուն է կալանավորել: ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Դավիթ Ղահրամանյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, հանդիսանալով ՀՀ քաղաքացի, կատարել է պետական դավաճանություն, ապօրինի կերպով ձեռք է բերել, փոխադրել եւ պահել ռազմամթերք: Վերջինս կալանավորված է, իսկ գործով հայտարարվել է նախաքննության ավարտ, եւ այն ուղարկվել է դատարան:

ՏՈՒԳԱՆՔ ԿՆՇԱՆԱԿՎԻ

Հանրային վայրերում կամ բացօթյա տարածքներում ստեղծագործական ելույթների իրականացման կարգը խախտելու համար կազմակերպչի նկատմամբ տուգանք կնշանակվի: Խոսքը 100 հազար դրամից 200 հազար դրամ գումարի մասին է: Իսկ եթե նույն արարքը տուգանվելուց հետո՝ մեկ տարվա ընթացքում կատարվի, ապա կազմակերպչի նկատմամբ կնշանակվի 500.000-800.000 դրամի չափով տուգանք: Բացի այս, կբռնագրավվի խախտողի երաժշտական գործիքը: Ըստ ՏԿԵՆ-ի՝ ցանկացած ելույթ իրականացնող անձ կամ խումբ առանց որեւէ սահմանափակումների կարող է իրականացնել գործունեություն, որը կարող է անհարմարություն պատճառել բնակիչներին եւ զբոսաշրջիկներին, խոչընդոտել քաղաքացու հանգիստն ու ազատ ժամանցը կազմակերպելու իրավունքի իրացմանը, ինչպես նաեւ խաթարել բազմաբնակարան շենքերի բնակիչների անդորրը:

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ ԵՆ ՈՒՆԵՑԵԼ

Ռուսաստանն ակտիվ ներդրում ունի հայ-ադրբեջանական խաղաղության ղայմանագրի նախապատրաստման գործում: Այս մասին երեկ կայացած ճեղազրույցում հայտարարել է ՌԴ ԱԳՆ պաշտոնական ներկայացուցիչ Մարիա Զախարովան:

ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆ
ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏ

ՎԼԱԴԻՄԻՐ ՊՈՒՏԻՆ
ՌԴ ՆԱԽԱԳԱՀ

«ՌԴ ԱԳ նախարարի՝ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորման հարցով հատուկ ներկայացուցիչ Իգոր Խովաեւը կանոնավոր խորհրդակցություններ է անցկացնում կողմերի հետ ընդհանուր լեզու գտնելու, փոխընդունելի հիմնարար սկզբունքների, խաղաղության համաձայնագրի պարամետրերի հասնելու համար», - ասել է նա:

Զախարովայի խոսքով՝ հայ-ադրբեջանական սահմանի սահմանազատումը նույնպես Ռուսաստանի միջնորդական ջանքերի կարեւոր ուղղություն է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ երկխոսության բարելավման ուղղությամբ:

ՌԴ ԱԳՆ ներկայացուցիչը հիշեցրել է, որ Մոսկվայի խորհրդատվական դերն այս գործընթացում արձանագրված է 2021 թվականի նոյեմբերի 26-ի Սոչիի բարձր մակարդակի եռակողմ հայտարարության մեջ:

«Մեր կողմից մենք միշտ պատրաստ ենք ընդունել մեր հայ եւ ադրբեջանցի ընկերներին Ռուսաստանի տարածքում: Համոզված ենք, որ հետխորհրդային տարածքում սահմանազատման եւ սահմանագծման առումով մեր երկրի եզակի մասնագիտական հնարավորություններն ու կարողությունները կարող են զգալիորեն ամրապնդել անվտանգությունը հայ-ադրբեջանական սահմանին եւ ընդհանուր առմամբ տարածաշրջանում»,- ասել է նա:

Ռուսաստանը, ըստ Զախարովայի, ելնում է նրանից, որ Երեւանն ու Բաքուն կորոշեն որոշակի միջոցառումների անցկացման կոնկրետ ժամկետները:

Իր հերթին ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը երեկ հեռախոսազրույց է ունեցել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ եւ քննարկել ԼՂ հարցով պայմանավորվածությունների իրականացման ընթացքը:

Այս մասին հաղորդագրություն է տարածել Կրեմլի մամուլի ծառայությունը:

«Քննարկվել են 2020 թվականի նոյեմբերի 9-ին, 2021 թվականի հունվարի 11-ին եւ նոյեմբերի 26-ին Ռուսաստանի, Հայաստանի եւ Ադրբեջանի ղեկավարների միջեւ Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ եռակողմ պայմանավորվածությունների իրականացման որոշ գործնական ասպեկտներ»,- ասված է հաղորդագրության մեջ:

Պուտինն ու Փաշինյանը պայմանավորվել են շարունակել շփումները տարբեր մակարդակներով:

Հավելենք, որ երկու օր է՝ Արցախում է լարված իրավիճակ տիրում ղարաբաղ-ադրբեջանական սահմանին: Արցախի Հանրապետության նախագահ Արայիկ Հարությունյանը օգոստոսի 2-ին հրավիրել է Անվտանգության խորհրդի ընդլայնված նիստ՝ ԱԺ քաղաքական ուժերի մասնակցությամբ:

Քննարկվել է շփման գծում նախօրեին ստեղծված իրավիճակը:

Ջեկուցմամբ հանդես է եկել պաշտպանության նախարար Կամո Վարդանյանը: Նախարարի խոսքով՝ լարվածությունը շփման գծի մի շարք հատվածներում շարունակում է պահպանվել, եւ Պաշտպանության բանակը տիրապետում է իրավիճակին, առանց մարդկային ու դիրքային կորուստների:

Օրակարգային հաջորդ հարցը վերաբերում էր Արցախի Հանրապետությունը Հայաստանի Հանրապետության հետ կապող միջանցքին: Ադրբեջանական կողմը Արցախում տեղակայված խաղաղապահ զորակազմի միջոցով պահանջ է ներկայացրել առաջիկայում երթեւեկությունը նոր երթուղով կազմակերպելու վերաբերյալ:

Անվտանգության խորհրդի նիստում քննարկվել են ստեղծված իրավիճակում ձեռնարկվելիք քայլերը, այդ թվում՝ նաեւ ռուսական խաղաղապահ զորակազմի միջոցով անվտանգ երթեւեկության ապահովումը:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ՆԱԽԱՔՆՆՈՒԹՅՈՒՆՆ ԱՎԱՐՏՎԱԾ Է

ՀՀ քննչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունում ավարտվել է Վեդի համայնքի նախկին ղեկավարի կողմից պաշտոնեական դիրքի անցում կատարելու դեպքի առթիվ հարուցված քրեական գործով նախաքննությունը:

Իրականացված քննչական եւ վարութային գործողությունների արդյունքում պարզվել է, որ Արարատի մարզի Վեդի համայնքի ղեկավարը պաշտոնավարման ընթացքում՝ 1999-2021 թթ. ընկած ժամանակահատվածում, անցել է պաշտոնեական լիազորությունները՝ էական վնաս պատճառելով անձանց իրավունքներին, ինչպես նաեւ հասարակության եւ պետության օրինական շահերին:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ համայնքի ղեկավարին մեղադրանք է առաջադրվել՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 309-րդ հոդվածի (Պաշտոնեական լիազորություններն անցնելը) 1-ին մասով:

Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական գործը՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ, ուղարկվել է դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին:

ՆՈՐ ՄԻՋՊԵՏԱԿԱՆ ԳԱՆԳԱՏ

2022 թվականի հուլիսի 27-ին Հայաստանը Մարդու իրավունքների եվրոպական դատարան է ներկայացրել նոր միջպետական ամբողջական գանգատ՝ ընդդեմ Ադրբեջանի:

Ինչպես տեղեկանում ենք միջազգային իրավական հարցերով ՀՀ ներկայացուցչի գրասենյակի տարածած հաղորդագրությունից, նշված գանգատն, ի թիվս այլնի, վերաբերում է 2022 թվականին Ադրբեջանի կողմից Արցախի Հանրապետության Խրամորթ եւ Փարուխ գյուղերի ուղղությամբ ձեռնարկված ագրեսիայի հետեւանքով քաղաքացիական բնակչության իրավունքների խախտմանը, Արցախի Հանրապետության սահմանամերձ գյուղերի բնակչության նկատմամբ Ադրբեջանի կողմից հնչեցվող իրական սպառնալիքներին, ինչպես նաեւ 2021-2022 թվականների ընթացքում ադրբեջանական զինված ուժերի կողմից Արցախի Հանրապետության խաղաղ բնակչության նկատմամբ ուժի կիրառման դեպքերին, որոնց արդյունքում խախտվել է անձանց կյանքի իրավունքը:

ՀՀ ԵՎ ՌԴ ԱԳ ՆԱԽԱՐԱՐՆԵՐ

Հայաստանի ԱԳ նախարար Արարատ Միրզոյանը հեռախոսազրույց է ունեցել Ռուսաստանի ԱԳ նախարար Սերգեյ Լավրովի հետ:

Զրուցակիցներն անդրադարձ են կատարել 2020թ. նոյեմբերի 9-ի, 2021թ. հունվարի 11-ի եւ նոյեմբերի 26-ի եռակողմ հայտարարություններով ձեռքբերված պայմանավորվածությունների կատարման ընթացքին:

Արարատ Միրզոյանն ու Սերգեյ Լավրովը քննարկել են նաեւ տարածաշրջանում տիրող անվտանգային իրավիճակը:

Հեռախոսազրույցի ընթացքում մտքեր են փոխանակվել 44-օրյա պատերազմի հետեւանքով առաջացած հումանիտար խնդիրների վերաբերյալ: Այս համատեքստում երկուստեք կարեւորվել է հայ ռազմագերիների եւ այլ պահվող անձանց ազատ արձակումը եւ հայրենադարձումը:

Կողմերն անդրադարձել են նաեւ երկուստեք հետաքրքրություն ներկայացնող տարածաշրջանային ու միջազգային օրակարգի այլ հարցերի:

ԿԵՂԾ ԽՈՍՏՈՒՄ

ՀԱՓՇՏԱԿԵԼ Է 3 ՄԻԼԻՈՆ ԴՐԱՄ

ՀՀ ֆինչական կոմիտեի հատուկ հանձնարարություններով գլխավոր վարչությունում իրականացված ֆինչական եւ վարութային մեծածավալ գործողությունների արդյունքում ղարզվել են խարդախությամբ, կաբառֆի ղատրվակով վարորդական իրավունքի վկայականներ տրամադրելու դեռֆի հանգամանքները:

Քննությամբ ձեռք բերված փաստական տվյալների համաձայն՝ Երեւան քաղաքի 54-ամյա բնակիչը իր օժանդակությամբ վարորդական իրավունքի վկայական ստանալու գործընթացը կազմակերպելու պատրվակով ծրագրել եւ պլանավորել է մեկ միասնական դիտավորությամբ մի շարք քաղաքացիներից խաբեությամբ հափշտակել առանձնապես խոշոր չափերի գումար:

Այսպես, վերջինս, ներկայանալով ոստիկանության համակարգի նախկին ծառայող եւ ոստիկանությունում կայուն կապեր եւ մտերիմներ ունեցող անձ, իրեն դիմած մի շարք քաղաքացիների կեղծ խոստումներ է տվել, թե, իբր, տվյալ ոլորտի պաշտոնատար անձանց իր միջոցով փոխանցված կաշառքի դիմաց կարող է կազմակերպել վարորդական իրավունքի վկայականներ ստանալու գործընթաց: Քաղաքացիների շրջանակը մեծացնելու նպատակով 54-ամյա տղամարդը հանդիպել է ավտոմեքենա վարելու դասընթացներ կազմակերպող ընկերության երկու աշխատակիցների հետ եւ թաքցնելով խարդախությամբ գումար հափշտակելու իր իրական մտադրությունը՝ նրանց եւս տեղեկացրել է, որ հանդիսանում է ոստիկանության համակարգի նախկին ծառայող, հայտնել, թե, իբր, կարող է իր ծանոթ պաշտոնատար անձանց միջոցով, որպես կաշառք փոխանցված գումարի դիմաց, կազմակերպել վարորդական իրավունքի վկայականներ ստանալու գործընթաց՝ նրանց առաջարկելով վարորդական իրավունքի վկայական ստանալու ցանկություն ունեցող քաղաքացիներ լինելու դեպքում դիմել իրեն՝դրա դիմաց խոստանալով գումար. նշված աշխատակիցները նպաստել են վարորդական իրավունքի վկայական ստանալու ցանկություն ունեցող 4 քաղաքացիների եւ 54-ամյա տղամարդու միջեւ կաշառքի շուրջ համաձայնությանը:

Նախաքննությամբ պարզվել է, որ 54-ամյա տղամարդը 25 քաղաքացիներից ստացել եւ խարդախությամբ հափշտակել է առանձնապես խոշոր չափերի՝ ընդհանուր 3.148.000 ՀՀ դրամ գումար:

Բացի այդ, 54-ամյա տղամարդը, տեղեկանալով Երեւան քաղաքի մեկ այլ բնակչի՝ աշխատանքի ընդունվելու ցանկության մասին, կրկին ներկայացել է որպես ոստիկանության աշխատակից եւ ոստիկանությունում կայուն կապեր ունեցող անձ, հավաստիացրել, որ կարող է այդ հարցում օգնել, որից հետո կաշառք տալու փորձի դրդչությամբ մաս-մաս նրանից ստացել եւ խարդախությամբ հափշտակել է խոշոր չափերի՝ 550.000 ՀՀ դրամ գումար:

Քրեական գործով ձեռք բերված փաստական տվյալների հիման վրա՝ որոշում է կայացվել կաշառք տալու փորձ կատարած 23 քաղաքացիների նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնել՝ գործուն զղջալու հիմքով, նույն հիմքով մեկ մեղադրյալի նկատմամբ քրեական հետապնդումը դադարեցվել է, 13 անձի նկատմամբ քրեական հետապնդում չիրականացնելու մասին որոշում է կայացվել՝ վերջիններիս արարքում հանցակազմի բացակայության հիմքով:

Ձեռք բերված բավարար ապացույցների համակցությամբ՝ 54-ամյա տղամարդուն մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով (2 դրվագ), 46-44-436-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով (2 դրվագ), հիշյալ 2 աշխատակիցներին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 437-րդ հոդվածի 1-ին մասով, 3 քաղաքացիների՝ ՀՀ նախկին քրեական օրենսգրքի 34-312-րդ հոդվածի 1-ին մասով:

Նախաքննությունն ավարտվել է, եւ քրեական վարույթի նյութերն ուղարկվել են դատավարական ղեկավարում իրականացնող դատախազին՝ մեղադրական եզրակացությունը հաստատելու եւ դատարան ուղարկելու միջնորդությամբ:

ԳՈՂՈՒԹՅՈՒՆ

ՀԱՓՇՏԱԿԵԼ ԵՆ 10 400 000 ՀՀ ԴՐԱՄ

ՀՀ ֆինչական կոմիտեի Լոռու մարզային ֆինչական վարչությունում ձեռնարկվում են ֆինչական եւ վարութային անհետաձգելի գործողություններ՝ Ստեփանավան քաղաքում տեղի ունեցած ավազակության դեռֆը բացահայտելու ուղղությամբ:

Դեպքի վերաբերյալ ահազանգը ստացվել է 2022թ. օգոստոսի 01-ին՝ժամը 05:55-ին, Ստեփանավան քաղաքի բնակչից, որը տեղեկացրել է դիմակավորված անձանց՝ իր առանձնատուն մտելնելու եւ գումար ու ոսկյա զարդեր գողանալու մասին:

Ստացված տեղեկությունների համաձայն՝ նույն օրը՝ ժամը 04:00-ի սահմաններում, դիմակավորված 4 անձինք ապօրինի մուտք են գործել Ստեփանավան քաղաքի Դուրյան փողոցում գտնվող առանձնատուն, կպչուն ժապավենով կապել տանտիրոջ եւ վերջինիս կնոջ ձեռքերն ու ոտքերը, այնուհետեւ, դանակի գործադրմամբ սպանության սպառնալիքներ տալով, տեղեկանալով գումարի եւ ոսկյա զարդերի գտնվելու վայրը, հափշտակել, նախնական տվյալներով, շուրջ 10 400 000 ՀՀ դրամ, 20 000 ԱՄՆ դոլար, ոսկյա զարդեր, բանկային քարտ, ինչպես նաեւ 2 բջջային հեռախոս:

Փաստի առթիվ ՀՀ քրեական օրենսգրքի 252-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ եւ 4-րդ կետերով նախաձեռնվել է քրեական վարույթ: Տանտերը եւ վերջինիս կինը ճանաչվել են տուժող եւ հարցաքննվել դեպքի հանգամանքների շուրջ:

Վարութային գործողությունների ընթացքում կատարվել է դեպքի վայրի զննություն, որի ընթացքում հայտնաբերվել եւ վերցվել են կպչուն ժապավեներ, հարցաքննվել են մի շարք անձինք, առգրավվել են դեպքի վայրին հարակից տարածքում առկա տեսանկարանող սարքի տեսագրությունները, նշանակվել են դատաբժշկական, դատագենետիկական, դատահետքաբանական փորձաքննություններ:

Նախաքննությունը շարունակվում է:

Ձեռնարկվում են անհրաժեշտ միջոցառումներ՝ օբյեկտիվ եւ բազմակողմանի քննություն ապահովելու, դեպքի բոլոր հանգամանքները, ենթադրյալ հանցագործություն կատարած անձանց ինքնությունը պարզելու, նրանց հայտնաբերելու եւ վարույթն իրականացնող մարմնին ներկայացնելու ուղղությամբ:

Հետաքննության մարմնին տրվել են հանձնարարություններ:

ԼՈՒՐԵՐ

ՈՒՂԵՎՈՐԸ ՄԱՀԱՑԵԼ Է

Գեղարքունիքի մարզում օգոստոսի 1-ին ողբերգական ավտովթար է տեղի ունեցել. Սեւան-Մարտունի-Գետափ ավտոճանապարհի 57-րդ կմ հատվածում բախվել են Գեղարքունիքի մարզի բնակիչներ 22-ամյա Արտյոմ Պ.-ի վարած Mercedes մակնիշի եւ 20-ամյա Արտյոմ Մ.-ի վարած Mitsubishi մակնիշի ավտոմեքենաները:

Վթարի հետեւանքով Mitsubishi-ի ուղեւոր Գեղարքունիքի մարզի բնակիչ 58-ամյա Ջեմմա Մախմուրյանը տեղում մահացել է: Իսկ Mitsubishi-ի վարորդ Արտյոմ Մ.ն, նրա ուղեւորներ Գեղարքունիքի մարզի բնակիչներ 41-ամյա Թելլի Ս.-ն, 46-ամյա Արմենուհի Մ.-ն, Mercedes-ի վարորդ Արտյոմ Պ.-ն եւ նրա ուղեւոր Գեղարքունիքի մարզի բնակիչ 22-ամյա Արթուր Ս.-ն մարմնական վնասվածքներով տեղափոխվել են «Մարտունի» բժշկական կենտրոն:

ՔԱՂԱՔԱՑԻՆ ԿԱՇԱՌՔ Է ԱՌԱՋԱՐԿԵԼ

ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակում բացահայտվել է ՀՀ ոստիկանության պաշտոնատար անձին՝ պարեկային ծառայության Երեւան քաղաքի գնդի պարեկին 100 ԱՄՆ դոլար կաշառք առաջարկելու դեպք:

Մասնավորապես՝ ոստիկանության պարեկներ Հ. Պ.-ն եւ Ա. Կ.-ն ծառայության ընթացքում՝ ժամը 01:20-ի սահմաններում, կանգնեցրել են Կ. Մ.-ի վարած ավտոմեքենան եւ ստուգման ընթացքում պարզել, որ վերջինս ավտոմեքենան վարել է ոչ սթափ վիճակում: Դրանից հետո Կ. Մ.-ն, իր օգտին ապօրինի անգործության, այն է՝տրանսպորտային միջոցը ոչ սթափ վիճակում վարելու համար իր նկատմամբ վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրություն չկազմելու եւ տրանսպորտային միջոցը պահպանվող հատուկ տարածք չտեղափոխելու համար պարեկ Հ. Պ.-ին առաջարկել է 100 ԱՄՆ դոլար կաշառք: Պարեկը չի ընդունել նշված առաջարկը, այլ պաշտոնատար անձին կաշառք առաջարկելու անմիջականորեն ծագած հիմնավոր կասկածի հիմքով ձերբակալել է Կ. Մ.-ին եւ նրան տեղափոխել ոստիկանության բաժին:

2022 թվականի հուլիսի 29-ին Կ. Մ.-ին մեղադրանք է ներկայացվել ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով նախատեսված հանցանքի կատարման համար: Նախաքննությունը շարունակվում է:

Նկատի ունենալով վերջին շրջանում հաճախ արձանագրվող ՀՀ ոստիկանության պարեկային ծառայության աշխատակիցներին կաշառք տալու կամ առաջարկելու դեպքերը՝ կրկին հիշեցնում ենք, որ ոչ միայն կաշառք տալը, այլ նաեւ առաջարկելը, համաձայն ՀՀ քրեական օրենսգրքի 436-րդ հոդվածի, համարվում է քրեորեն հետապնդելի արարք, որի համար նախատեսված է ընդհուպ մինչեւ 7 տարի ժամկետով ազատազրկում, ուստի հորդորում ենք զերծ մնալ նման արարքներ կատարելուց եւ դրսեւորել իրավաչափ վարքագիծ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝օգոստոսի 1-ից 2-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 71 դեպք, որոնցից 2-ը՝նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐՔ

ՉԻ ԳՈՐԾՈՒՄ

Արդեն մի քանի տարի է, ինչ Նոյեմբերյան քաղաքից դեպի Տավուշի մարզկենտրոն Իջեւան եւ հակառակ ուղղությամբ հասարակական տրանսպորտ՝ ավտոբուս կամ միկրոավտոբուս, չի գործում: Նախկինում այդ երթուղով միկրոավտոբուս էր աշխատում, որի ուղեվարձը 500 դրամից բարձրացրին, դարձրին 1000 դրամ, սակայն որոշ ժամանակ համարելով, որ այդ երթուղին եկամտաբերություն չի ապահովում, այն փակեցին: Նոյեմբերյան քաղաքի եւ Նոյեմբերյան խոշոր համայնքի բազմաթիվ բնակիչներ մարզկենտրոն Իջեւանում ամեն օր գործեր են ունենում, սակայն Նոյեմբերյան խոշոր համայնքի բնակավայրերը Իջեւանին կապող հասարակական տրանսպորտ չկա: Իջեւան քաղաքի պետական հիմնարկներում աշխատող նոյեմբերյանցիներ կան, որոնք ամեն աշխատանքային օր Նոյեմբերյանից Երեւան մեկնող միկրոավտոբուսով են գնում եւ դրանով աշխատանքից տուն են վերադառնում, միկրոավտոբուսում տեղ զբաղեցնելու համար 1000 դրամի փոխարեն Երեւան մեկնող կամ այնտեղից վերադարձող ուղեւորի համար նախատեսված 2000 դրամ վճարում: Տավուշի մարզպետարանը պետք է մտածեր Նոյեմբերյան-Իջեւան-Նոյեմբերյան երթուղով հասարակական տրանսպորտ գործարկելու մասին, սակայն մարզպետարանն այդ ուղղությամբ քայլեր չի ձեռնարկում:

ՏՈՒԳԱՆՔՆԵՐ

Նոյեմբերյան քաղաքի փոքր խանութների տերերը դժգոհեցին, որ այս տարվա գարնանը պետական եկամուտների կոմիտեի Իջեւանի տարածքային բաժնի աշխատակիցները Նոյեմբերյանում բազմաթիվ խանութներ են տուգանել, որոշ խանութներ փակել 7-10 օրով: Հարկային ծառայության կողմից կիրառված երկու տուգանքներից հետո խանութներ փակելը ներկայումս օրենքով արգելված է: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում նոյեմբերյանցի խանութատերերն ասացին, որ պետական եկամուտների կոմիտեի աշխատակիցները նոյեմբերյանցի խանութատերերին տուգանել են՝ ասելով, որ նրանք գնորդներին ՀԴՄ կտրոն չեն տամադրում այն դեպքում, երբ այդ խանութների տերերը ապրանք են ձեռք բերում Երեւանի մեծածախ վաճառքի կետերից, որտեղ ՀԴՄ չեն տրամադրում, այսինքն՝ ՊԵԿ-ի աշխատակիցները, փոխանակ գնան ապրանքի ձեռքբերման տեղ, Երեւանի մեծածախ վաճառքի կետեր, տուգանք են կիրառել ապրանքի ձեռքբերման շղթայի ծայրին՝ հեռավոր, սահմանամերձ Նոյեմբերյանում: Չնայած ՊԵԿ-ի ոչ օրինաչափ գործողություններին՝ Նոյեմբերյան քաղաքի խանութների տերերը չեն վիճարկել ՊԵԿ-ի գործողությունների օրինաչափությունը՝ մտածելով, որ ՊԵԿ-ի հետ հակադրվելն իրենց համար վատ հետեւանքներ կունենա: ՊԵԿ-ի գործողություններից տուժած Նոյեմբերյան քաղաքի բազում խանութներից միայն մեկի տերն է ՊԵԿ-ի դեմ դիմել դատարան: Նոյեմբերյանի խանութների տերերը մեզ հետ զրույցում ասացին, որ հարկային տեսչության աշխատանքում շատ բան չի փոխվել, նրանք նախկինի նման տնտեսվարողներին տուգանելու պլան ունեն, որը կատարում են:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԿԱԼԱՆԱՎՈՐՎԱԾ ԿՏՆԱ

ԴԱՏԱՐԱՆԸ ՄԵՐԺԵՑ ԳՐԱՎԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

Երեւան քաղաքի ընդհանուր իրավասության դատարանի Կենտրոնի նստավայրում, Կարեն Ֆարխոյանի նախագահությամբ, երեկ շարունակվեց ՀՅԴ անդամ Գերասիմ Վարդանյանի գործով նիստը: Հիշեցնենք՝ ՀՅԴ անդամ Գերասիմ Վարդանյանը ձերբակալվել է դեռեւս մեկուկես տարի առաջ հարուցված քրեական գործի շրջանակում. մեղադրվում է 2020թ. նոյեմբերի 9-ին տեղի ունեցած իրադարձությունների ժամանակ զանգվածային անկարգություններ կազմակերպելու եւ լրագրողի աշխատանքը խոչընդոտելու համար («Ազատություն» ռ/կ-ի գրասենյակ ներխուժման փորձ): Նա կալանավորվել է այս տարվա մայիսին՝ «Դիմադրություն» շարժման անհնազանդության գործողությունների ժամանակ: Վերջերս դատարանը եւս երկու ամսով երկարացրեց Գերասիմ Վարդանյանի կալանքի ժամկետը: Պաշտպան Բենիկ Գալստյանը երեկ միջնորդություն ներկայացրեց՝ Գերասիմ Վարդանյանի խափանման միջոցը փոխելու մասին: Գերասիմ Վարդանյանի համար անձնական երաշխավորություններ են ներկայացրել Աժ չորս պատգամավորներ՝ Արամ Վարդեւանյանը, Աշոտ Սիմոնյանը, Աննա Գրիգորյանը եւ Թադեւոս Ավետիսյանը: Պաշտպանը միջնորդեց նաեւ Գերասիմ Վարդանյանի նկատմամբ կիրառել 3 միլիոն 100 հազար դրամ գրավ կամ դրանից ավելի գումար՝ դատարանի հայեցողությամբ:



Պաշտպանը հայտարարել էր, որ առավել նպատակահարմար կլիներ, որ դատարանը նախապատվությունը տար երաշխավորությամբ խափանման միջոցի փոփոխմանը: Դատախազն էլ առարկեց միջնորդությունների դեմ՝ հայտարարելով, որ նախորդ նիստից, երբ դատարանը որոշել է երկարացնել Գերասիմ Վարդանյանի խափանման միջոցը, որեւէ հանգամանք չի փոխվել, ուստի, խափանման միջոցի փոփոխության միջնորդությունն անհիմն է: Նախկինում՝ մայիսի 4-ին կայացած նիստում դատախազը հայտարարել էր, որ 60 միլիոն դրամ գրավի դիմաց իր համար ընդունելի կլինի խափանման միջոցի փոփոխությունը, սակայն կտրականապես դեմ է նաեւ գրավի կիրառմամբ Գերասիմ Վարդանյանի խափանման միջոցի փոփոխմանը: Գերասիմ Վարդանյանն էլ հայտարարեց, որ գրավի չափը դատարանը պետք է որոշի ողջամտության եւ իր հնարավորությունների սահմաններում, այլապես ինքը կհրաժարվի գրավի, իր բնորոշմամբ՝ փրկագնի, վճարումից, քանի որ ինքն իր ազատությունն աճուրդի չի հանել ու պատրաստ է մինչեւ վերջ պայքարել արդարության համար: Նա հավաստիացրեց, որ հասնելու է արդարության:

Դատարանը մերժեց պատգամավորների անձնական երաշխավորությամբ Գերասիմ Վարդանյանի խափանման միջոցը փոխելու միջնորդությունը: Դատարանը մերժեց նաեւ գրավով խափանման միջոցը փոխելու միջնորդությունը: Պաշտպանը տեղեկացրեց նաեւ, որ բողոքարկել են դատարանի որոշումը՝ Գերասիմ Վարդանյանի կալանքի ժամկետը երկարացնելու մասին:

Ք. Մ.

ԱՐՑԱԽԻ ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆ

ԿՅԱՆՔԸ ԼԱՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՄԹՆՈԼՈՐՏՈՒՄ Է

Արցախի Հանրապետության հյուսիսային եւ հյուսիս-արեւմտյան հատվածներում Ադրբեջանի զինված ուժերի կողմից նախաձեռնվող ու իրականացվող սադրիչ գործողությունները Արցախի Հանրապետության կողմից արդեն որերորդ անգամ բարձրաձայնված հայաստյաց խաղաքականության ու Արցախը հայաթափելու ռազմավարության տակտիկական քայլերի մասն են: Այս մասին ասված է Արցախի դատախազության տարածած հաղորդագրության մեջ:

«Արցախի պաշտպանության բանակն արդեն ներկայացրել է իրավիճակը շփման գծում եւ պարբերաբար տրամադրում է տեղեկատվություն:

Թեեւ բազմիցս խոսվել է այդպիսի իրավիճակներում բացառապես պաշտոնական աղբյուրներին հետեւելու անհրաժեշտության մասին, այդուհանդերձ նմանօրինակ դեպքերում մշտապես ականատես ենք լինում ինքնագործունեության եւ անհարկի խուճապ ծնող երեւույթների:

Արցախում հանրային կյանքը լարվածության մթնոլորտում է անցնում գրեթե ամեն օր, պետական մարմիններն այդ պայմաններում փորձում են կազմակերպել առողջապահություն, կրթություն, սոցիալական ապահովություն, քաղաքաշինական աշխատանքներ, մինչդեռ լարվածության ավելորդ բաժինը ոչ միայն կաթվածահար է անում նշված գործընթացը, այլեւ հիշյալ համակարգերի առջեւ արհեստականորեն ծնում է հավելյալ ծանրաբեռնվածություն, որպիսի հետեւանք արձանագրվել է նաեւ վերջին օրերին:

Ուստի Արցախի Հանրապետության ներքին անվտանգությունն ու հանրային կյանքի բնականոն ընթացքն ավելորդ ցնցումներից զերծ պահելու համար խնդրում ենք ձեռնպահ մնալ շփման գծում առկա իրադրության շուրջ իրականությանը չհամապատասխանող կամ չստուգված տեղեկություններ տարածելուց»,- ասված է հաղորդագրության մեջ:

● *Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 14 ՃՏՊ. 1 մարդ զոհվել է, 25-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

«ՎՏԲ–ՀԱՅԱՍՏԱՆ» ԲԱՆԿ

Տեղեկացնում ենք, որ «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի թվայնացման եւ բիզնես գործընթացների կատարելագործման շրջանակներում եւ ՀՀ կենտրոնական բանկի նախագահի թույլտվությամբ՝ «ՎՏԲ-Հայաստան» բանկի՝ գ. Ծաղկահովիտի «Ծաղկահովիտ» մասնաճյուղը (հասցե՝ գ. Ծաղկահովիտ, Բժշկյան 9/4), գ. Ախուրյանի «Ախուրյան» մասնաճյուղը (հասցե՝ գ. Ախուրյան, Ջրաշինարարների 1/2) 2022թ. օգոստոսի 5-ից չեն գործելու:

Նշված մասնաճյուղերում տեղադրված են Cash-in/Cash-Out բանկոմատներ, որոնց միջոցով կարելի է կատարել բանկային գործառնություններ. հասանելի են նաեւ բանկի հեռահար սպասարկման ուղիները՝ «Մոբայլ բանկինգ», «Ինտերնետ բանկինգ» եւ «Վիդեո բանկինգ»:

«Ծաղկահովիտ» մասնաճյուղի բոլոր հաճախորդների, ինչպես նաեւ նրանց ակտիվների եւ պարտավորությունների սպասարկումը 2022թ. օգոստոսի 5-ից սկսած կիրականացվի ք. Ապարան, Բաղրամյան 14 հասցեում գտնվող «Ապարան» մասնաճյուղում:

«Ախուրյան» մասնաճյուղի բոլոր հաճախորդների, ինչպես նաեւ նրանց ակտիվների եւ պարտավորությունների սպասարկումը 2022թ. օգոստոսի 5-ից սկսած կիրականացվի ք. Գյումրի, Գորկու 78 հասցեում գտնվող «Գյումրի» մասնաճյուղում:

Բացի նշված մասնաճյուղերից, հաճախորդները կարող են սպասարկվել «ՎՏԲ-Հայաստան բանկ» ՓԲԸ-ի ցանկացած այլ մասնաճյուղում:

Մանրամասն տեղեկատվություն ստանալու համար կարող եք զանգահարել 87 87 հեռախոսահամարով:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (1)

ՀՀ Սնանկության դատարանի 27.01.2021թ. թիվ ՍՆԴ/2770/04/20 վճռով սնանկ ճանաչված «Ռոզա-Անի» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ 04421347, գրանցման համարը՝ 31.110.01493, ք.Երեւան, Նոր Նորք, Նանսենի փողոց 9/118) պարտատերերի առաջին ժողովը նշանակվել է 19.08.2022թ. ժամը 17:00-ին ք.Երեւան, Կոմիտասի պող. 19/1, տարածք 23/1:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (2)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (չորրորդ փուլ) 2022թ. օգոստոսի 16-ին՝ ժամը 11:30-ին, ՀՀ Արագածոտնի մարզի Թալին համայնքի Պարտիզակ բնակավայրի ղեկավարի նստավայրում տեղի կունենան «Ջ. Վարդանյան» ՍՊԸ-ի կողմից Լուկաշինի տուֆերի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումներ: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ Շրջակա միջավայրի նախարարության կայքէջում՝ mnp.am, կամ զանգահարելով 011 22 02 18:

ԿԳՄՍՆ

ՏՆԱՅԻՆ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ

ՀՀ կրթության, գիտության մշակույթի եւ սպորտի նախարարությունը հանրային քննարկման է ներկայացրել հանրակրթական ուսումնական հաստատության սովորողների տնային ուսուցման կարգի նախագիծը:



ԿԳՄՍՆ-ից հայտնում են, որ նախագծի նպատակն է հանրակրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում հաշվառված եւ առողջական վիճակի պատճառով դպրոց հաճախել չկարողացող, հետեւաբար կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների (ԿԱՊԿ) ուսումնառությունը տնային, հիվանդանոցային, մանկատնային պայմաններում ապահովելը:

Համաձայն նախագծի՝ սովորողների համար տնային ուսուցումը կազմակերպում է այն ուսհաստատությունը, որտեղ հաշվառված է սովորողը: Այն կարող է իրականացվել հեռավար ուսուցման ձեւով՝ ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի 2020 թվականի մայիսի 20-ի թիվ 09 հրամանի համաձայն:

Տնային ուսուցման իրավունք վերապահող հիվանդությունների ցանկը սահմանում է ՀՀ կառավարությունը: Տնային ուսուցման կազմակերպման համար հիմք են համարվում բժշկական հաստատության տված եզրակացությունը, սովորողի ծնողի (օրինական ներկայացուցչի) գրավոր դիմումը եւ ծնողի ու հաստատության միջեւ կնքված պայմանագիրը (նախագծում առկա են ձեւաթղթերը):

Տնային ուսուցում կազմակերպելու համար պայմանագիրը կնքվում է առավելագույնը երկու տարի ժամկետով, կարող է երկարաձգվել միայն հաստատության մանկավարժական խորհրդի որոշման եւ բժշկական եզրակացության հիման վրա: Սովորողների համար տնային ուսուցումը կազմակերպվում է ուսումնական պլանների, իսկ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար՝ անհատական ուսուցման պլանի համաձայն:

Տնային պայմաններում սովորողին տրամադրվող մանկավարժահոգեբանական աջակցությունն իրականացվում է դպրոցի եւ Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժահոգեբանական աջակցության թիմի մասնագետների կողմից՝ համաձայն ԱՈՒՊ-ի:

Հաստատությունը ուսման ընթացքում սովորողին անվճար տրամադրում է դպրոցի գրադարանային ֆոնդում առկա դասագրքեր/ուսումնաօժանդակ նյութեր, տանն ապահովում է սովորողների ուսումնառության իրականացումը՝ ներառյալ էլեկտրոնային ուսուցման եւ հեռավար ուսուցման տեխնոլոգիաների կիրառումը, իրականացնում է սովորողի ուսումնական առաջադիմության ընթացիկ գնահատում, ամփոփիչ ստուգում, ատեստավորում, սովորողի փոխադրում հաջորդ դասարան եւ այլն:

Տնային ուսուցումը կազմակերպվում է պետական բյուջեով՝ ուսհաստատությանը հատկացված ֆինանսական միջոցների հաշվին: Տնային ուսուցման կազմակերպումը կրում է ժամանակավոր բնույթ, եւ այդ ժամանակահատվածում դպրոցն իրականացնում է նախապատրաստական աշխատանքներ սովորողին դասարանային պայմաններում կրթության մեջ ընդգրկելու համար:

Այսպիսով, սովորողների տնային ուսուցման կարգը թույլ կտա կարգով առանձնացված դեպքերում սովորողների ուսուցումն իրականացնել տնային պայմաններում՝ անհատական ուսուցմամբ, ինչն էլ կնպաստի նշված սովորողների կրթության իրավունքի իրականացմանը՝ ապահովելով կրթության շարունակականությունը:

Քաղաքացիները եւ շահառու խմբերը մինչեւ օգոստոսի 10-ը կարող են նախագծի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքում:

Ն.Հ.

ՀՐԱՊԱՐԱԿԱՅԻՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ (3)

«Բի Էս Թի» ՍՊԸ-ն (այսուհետ՝Կազմակերպիչ) «Ակսոն» ԱՀ Բորսայի հարթակում.

1. Իրականացնելու է բաց աճուրդ համապատասխան փուլերով՝ «դասական» (գնի բարձրացմամբ), այնուհետեւ «հոլանդական» (գնի նվազեցմամբ) եղանակներով: Աճուրդի ընթացքում վաճառվելու են «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտերը.

- Կոտայքի մարզ, համայնք Առինջ, 21-րդ փողոց, թիվ 22 հասցեում գտնվող 276.9 ք.մ. մակերեսով բնակելի տուն եւ 0.08 հա մակերեսով հողամաս: Լոտի մեկնարկային գինը՝79860000 ՀՀ դրամ:
- Վայոց ձորի մարզ, համայնք Եղեգնաձոր ք., Արսենյան փողոց, 9 շենք, թիվ 44 հասցեում գտնվող 66.6 ք.մ. մակերեսով բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝ 17700000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը՝ ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցեում 19.08.2022թ.-ին, ժ. 12:00-ին դասական եղանակով, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին՝հոլանդական եղանակով: Աճուրդի ավարտը՝19.09.2022թ.-ին:

2. Շարունակելու է «Արդշինբանկ» ՓԲԸ-ին (այսուհետ՝բանկ) գրավի իրավունքով պատկանող հետեւյալ լոտի բաց աճուրդը.

- ք. Երեւան, Նոր-Նորք, Ֆ. Նանսենի փողոց, 6 շենք, 126 հասցեում գտնվող 62 ք.մ. բնակարան: Լոտի մեկնարկային գինը՝26270000 ՀՀ դրամ:

Աճուրդի փուլերը հոլանդական եղանակով՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, 82/31 հասցեում 19.08.2022թ.-ին, ժ. 12:00-ին, այնուհետեւ յուրաքանչյուր աշխատանքային օր, նույն վայրում, նույն ժամին: Աճուրդի ավարտը՝ 19.09.2022թ.-ին:

Լոտերի նկատմամբ սահմանափակումները՝գույքերը գրավադրված են:

Աճուրդի մասնակցության նախավճարը սահմանված է համապատասխան գույքի ընթացիկ մեկնարկային գնի 1%-ի չափով, որի վճարման վերջնաժամկետը սահմանված է յուրաքանչյուր աճուրդի փուլի օրվան նախորդող աշխատանքային օրվա ժամը 16:00-ն: Նախավճարը վճարվում է «Բի Էս Թի» ՍՊԸ -ի դրամարկղումաճուրդի կայացման հասցեում, կամ բանկային հաշվին («Արդշինբանկ» ՓԲԸ-ում 2470103374150000 հաշվեհամարին) կամ կազմակերպչի կողմից տրված այլ հաշվեհամարին: Աճուրդին մասնակցելու համար անհրաժեշտ է ներկայացնել՝ ֆիզիկական անձանց համար անձը հաստատող փաստաթուղթ եւ Կազմակերպչի կողմից տրված մասնակցի վկայական (այսուհետ՝աճուրդի վկայական), որը հաստատելու է նաեւ նախավճարի մուծման փաստը, իսկ իրավաբանական անձանց համար՝կանոնադրությունը, իրավաբանական անձանց պետական գրանցման վկայականը, պաշտոնատար անձի կամ ներկայացուցչի լիազորությունները հաստատող փաստաթուղթ եւ աճուրդի վկայական:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն անձը, ով առաջարկել է ամենաբարձր գինը: Վերջին ամենաբարձր գնային հայտ ներկայացրած մասնակիցը, աճուրդավարի մուրճիկի երրորդ հարվածից հետո, համարվում է աճուրդում հաղթած մասնակից: Աճուրդին մասնակցած, սակայն չհաղթած անձի մուծած նախավճարը վերադարձվում է աճուրդն ավարտվելուց հետո մեկ աշխատանքային օրվա ընթացքում: Նախավճարը ենթակա է վերադարձման, եթե աճուրդը համարվում է չկայացած: Եթե աճուրդում հաղթող ճանաչված անձը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը կամ առուվաճառքի պայմանագիրը, ապա նա կորցնում է իր մուծած նախավճարը: Եթե Կազմակերպիչը հրաժարվում է ստորագրել արձանագրությունը, ապա նա պարտավոր է աճուրդում հաղթող ճանաչված անձին վերադարձնել նախավճարը:

Նախքան աճուրդի ավարտն աճուրդային լոտի նկատմամբ բանկի գրավի կամ սեփականության իրավունքի դադարման հետեւանքով աճուրդի մասնակիցների կորուստների եւ վնասների համար բանկը որեւէ պատասխանատվություն չի կրում:

Լոտերն ուսումնասիրելու ցանկություն հայտնած անձինք կարող են սույն ծանուցման օրվան հաջորդող օրվանից մինչեւ աճուրդի ավարտը, յուրաքանչյուր աշխատանքային օր, ժ. 10:00-ից մինչեւ 18:00-ն, այցելել վերը նշված հասցեներով եւ ծանոթանալ լոտերի հետ՝այցելությունը նախապես համաձայնեցնելով Կազմակերպչի հետ: Սույն ծանուցումը կարող է փոփոխվել մամուլում հրապարակվելու միջոցով: Աճուրդների անցկացման կանոնակարգին կարող եք ծանոթանալ եւ անվճար ստանալ կանոնակարգի պատճենը, դիմելով Կազմակերպչին՝ք. Երեւան, Սայաթ-Նովա պողոտա, 40 շենք, թիվ 82/31 հասցե: Բոլոր այլ տեղեկությունների համար կարող եք զանգահարել (011) 56-45-13 հեռախոսահամարով կամ այցելել www.llcbst.am, www.akson.am կայքեր:

● *«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:*

ՎԱՎԵՐԱԳՐԱԿԱՆ

ԵԳԻՊՏԱՑԻ ՌԵԺԻՍՈՐԸ՝ ԱՐՑԱԽԻ ՄԱՍԻՆ

Եգիպտացի լրագրող եւ ռեժիսոր Էսամ Նագիի «Մոռացված հայրենիք» վավերագրական ֆիլմն աշխարհին պատմում է արցախյան 44-օրյա պատերազմի, Հայաստանի եւ Ադրբեջանի սահմանային կյանքի, Արցախի փախստականների մասին, որոնք այժմ բնակվում են Սյունիքում:

Ֆիլմի պրեմիերան տեղի է ունեցել «Ոսկե ծիրան» 19-րդ միջազգային կինոփառատոնի շրջանակում, իսկ հուլիսի 29-ին հանրության լայն շրջանակն այն դիտելու հնարավորություն ունեցավ «Նարեկացի» արվեստի միությունում:

Էսսամ Նագին կարծում է, որ միջազգային հանրությունն այնքան էլ խորամուխ չի լինում արցախյան հիմնախնդրի մեջ, ուստի իր պարտքն է ֆիլմի միջոցով պատմել իրողությունը:

Նագին պատերազմի ընթացքում Հայաստանում չի եղել, եկել է պատերազմից վեց ամիս անց:

«Պատերազմի ժամանակ այնքան էլ հեշտ չէր գալ Հայաստան, քանի որ դա չափազանց էմոցիոնալ կլիներ: Ես չէի ցանկանում այդ ապրումները փոխանցել աշխարհին, ուզում էի՝ մարդիկ հանդարտվեն, խորհեն կատարվածի մասին»,-ն շեց նա:

Էսսամ Նագին կարծում է, որ հայերը բազմիցս կոտրվել են ու վերականգնվել, եւ նրանք ամուր հոգի ունեն: Նրա խոսքով՝ միջազգային հանրությունը պետք է տեղեկացված լինի, իմանա ճշմարտությունը, կանգնի Հայաստանի կողքին, որպեսզի կատարվածը չկրկնվի:

Հեղինակը նախատեսում է կինոնկարը ցուցադրել Գորիսում եւ Գյումրիում, այնուհետեւ՝ կինոփառատոններում: Նա ֆիլմի միջոցով ուզում է ցույց տալ, որ հայերը միայնակ չեն:

Ռեժիսորի հետ զրուցելիս նկատեցինք, որ նա կրում է մատանիներ, որոնցից մեկի վրա գրված է՝ Երեւան, իսկ մյուսի վրա տերունական աղոթքն է: Նագին ասաց, որ տարիներ շարունակ կրում է մատանիները, քանի որ Հայաստանն իր սրտում է:

Էսամ Նագին վավերագրական ֆիլմեր է թողարկել եւ նկարահանել շատ երկրներում, որոնց թվում են Իրաքը, Բրազիլիան, Հարավային Աֆրիկան, Ռուանդան, Հայաստանը, Ուգանդան եւ այլն: Հիմնել է Firsttree.art արտադրական ձեռնարկությունը, որն արվեստին առնչվող նախագծեր է առաջ քաշում եւ թողարկում Մերձավոր Արեւելքում եւ Հյուսիսային Աֆրիկայում:

Մառախլապատ Գորիսում 2020-ի պատերազմից մեկ տարի անց սկսվել են «Մոռացված հայրենիք» ֆիլմի նկարահանումները: Ֆիլմն ընդգրկում է հայ խիզախ կանանց նկարագրությունները՝ Հայաստանի պատմության հետ միահյուսված: «Մոռացված հայրենիքը» լուսաբանում է Հայաստանի, հատկապես՝ երկրի ամենահարավային մարզի՝ Սյունիքի աշխարհագրական եւ ռազմավարական կարեւորությունը, պատմական ու ներկա մարտահրավերները եւ մշուշոտ ապագան նման անկայուն տարածաշրջանում:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գ.

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (4)

Տիպ՝ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ լիցենզավորված անձի մտադրության մասին հայտարարություն:

Հայտատու՝ «ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N359-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետ:

Ի գիտություն հասարակության՝

«ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն մտադիր է դիմել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ընկերության ՀՀ Արագածոտն, 12-րդ փողոց, 9 հողամասում կառուցված «ՀԵԼԻՈՍ 2» արեւային էլեկտրակայանից առաքվող էլեկտրաէներգիայի սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը՝ 25.052 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ:

Հասցե՝ ք.Երեւան, Աբելյան 3/4:

Հեռ.՝ +37491922922:

Էլ. փոստ՝ tevosyan.hov@gmail.com:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (5)

Տիպ՝ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ լիցենզավորված անձի մտադրության մասին հայտարարություն:

Հայտատու՝ «ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N359-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետ:

Ի գիտություն հասարակության՝

«ՀԵԼԻՈՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն մտադիր է դիմել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ընկերության ՀՀ Արագածոտն, 12-րդ փողոց, 5 հողամասում կառուցված «ՀԵԼԻՈՍ 3» արեւային էլեկտրակայանից առաքվող էլեկտրաէներգիայի սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը՝ 25.052 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ:

Հասցե՝ ք.Երեւան, Աբելյան 3/4:

Հեռ.՝ +37491922922:

Էլ. փոստ՝ tevosyan.hov@gmail.com:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (6)

Տիպ՝ էներգետիկայի բնագավառում սակագների սահմանման կամ վերանայման վերաբերյալ լիցենզավորված անձի մտադրության մասին հայտարարություն:

Հայտատու՝ «ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2013 թվականի հոկտեմբերի 23-ի N359-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետ:

Ի գիտություն հասարակության՝

«ՎԵՆՏՈՒՍ ԷՆԵՐՋԻ» ՍՊԸ-ն մտադիր է դիմել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողով ընկերության ՀՀ Արագածոտն, 12-րդ փողոց, 1/1 հողամասում կառուցված «ՎԵՆՏՈՒՍ 2» արեւային էլեկտրակայանից առաքվող էլեկտրաէներգիայի սակագնի սահմանման հայտով:

Առաջարկվող սակագինը՝ 25.052 դրամ/կՎտժ՝ առանց ԱԱՀ:

Հասցե՝ ք.Երեւան, Աբելյան 3/4:

Հեռ.՝ +37491922922:

Էլ. փոստ՝ tevosyan.hov@gmail.com:

ԼՈՒՐԵՐ

ՀՀ ՄՐՑԱՎԱՐՆԵՐԸ ԿՄՊԱՄԱՐԿԵՆ

Հայաստանի մրցավարները կսպասարկեն Կոնֆերենցիաների լիգայի որակավորման երրորդ փուլի «Վիբորգ» (Դանիա) - «Բ36 Տորսհավն» (Ֆարերյան կղզիներ) հանդիպումը, որը տեղի կունենա այսօր՝ օգոստոսի 3-ին, դանիական Վիբորգ քաղաքում: Խաղը կսպասարկեն հայ մրցավարները՝ Հենրիկ Նալբանդյանի գլխավորությամբ: Նրան կօգնեն Մեսրոպ Ղազարյանը եւ Սարգիս Հովհաննիսյանը: Հանդիպման չորրորդ պաշտոնյան է Զավեն Հովհաննիսյանը:

Forbes–Ի ՑԱՆԿՈՒՄ

«Խոսրովի անտառ» պետական արգելոցը եւ «Դիլիջան» ազգային պարկը ներառվել են Forbes-ի՝ Կովկասի բնության հրաշքների ցանկում:

Հայտնի է, որ առաջին ազգային պարկը ստեղծվել է 1872 թվականին, Հայաստանի «Խոսրովի անտառ» պետական արգելոցը մոտ 1500 հին է Յելոուսթոունից: Արգելոցը հարուստ է բուսական ու կենդանական աշխարհով: «Դիլիջան» ազգային պարկը իր մեջ ներառում է ընդարձակ անտառներ, տեղական կենդանական աշխարհ եւ դարավոր կառույցներ հենց Հայաստանի սրտում: Չնայած տարածաշրջանը լի է հայկական տիպիկ կաթնասուններով, թռչուններով եւ երկկենցաղներով, զբոսաշրջության ամենանշանավոր գրավչություններից մեկն այնուամենայնիվ տեղի բնակիչներն են: Դիլիջանում են գտնվում մի շարք պատմական կրոնական շինություններ, այդ թվում՝ Հաղարծին վանքը, ինչպես նաեւ Գոշավանքը՝ 800 տարի առաջ կառուցված հսկայական համալիրը:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (7)

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման եւ փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաեւ ՀՀ կառավարության 19.11.2014 թ. N1325-Ն որոշմամբ սահմանված կարգով 2022թ. օգոստոսի 15-ին՝ ժամը 12:00-ին, ՀՀ Արարատի մարզի Արարատ համայնքի Արարատ կուլտուրայի տան շենքում տեղի կունենա «ՖԻՇ ՖԱՐՄ» ՍՊԸ-ի ՀՀ Արարատի մարզի Նոյակերտի ձկնաբուծական տնտեսության համար նախատեսված ավազանների կառուցման աշխատանքների հանրային քննարկումներ /1-ին հանրային քննարկում/: Փաստաթղթերին կարելի է ծանոթանալ ք. Երեւան, Ն. Ստեփանյան փ., շենք 10, բն 39, հեռ.՝ 099445474, 093230055:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ (8)

«Ընդերքի մասին» օրենքի 48.1 հոդվածի պահանջների համաձայն՝ «ՀԱՅԿ ԳՐՈՒՊ» ՍՊ ընկերությանը ընդերքի տրամադրելու նպատակով սույն թվականի օգոստոսի 12-ին՝ ժ. 11-ին, Մաստարա համայնքում տեղի կունենա «ՀՀ Արագածոտնի մարզի Մաստարայի տուֆերի հանքավայրի Հայք տեղամասում օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների նախագծի՝ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ հանրային քննարկումների չորրորդ փուլը:

● *Օգոստոսի 8-ին «Բոհեմ» թատրոնում տեղի կունենա «#ԳործՉկա» սթենդափ-ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2000-5000 դրամ: Սկիզբը՝ ժամը 19:30-ին:*

ԵՂԵ՛Ք ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

Էջը՝ ՆԱԻՐԻԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կարո՞ղ եք ասել, թե բնակչության սոցիալական պաշտպանության շուրջօրյա խնամքի ընդհանուր տիպի հաստատություն ընդունվելու համար ում դեմ է դիմի քաղաքացին:

Ինեսա Պետրոսյան (64 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացին (կամ նրա օրինական ներկայացուցիչը) պետք է դիմի փաստացի բնակության վայրի տարածքը սպասարկող սոցիալական աջակցության տարածքային գործակալություն կամ բաժին (այսուհետ՝ տարածքային մարմին), որտեղ քաղաքացուն տրամադրվում է «Խնամքի տրամադրման համար դիմած անձի բժշկական քարտ» ձեւաթուղթը, որը լրացվում է քաղաքացուն սպասարկող տարածքային պոլիկլինիկայի կողմից: Տարածքային մարմնի ղեկավարը որոշում է կայացնում խնամք տրամադրելու մասին եւ այն ներկայացնում է Աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն: Նախարարությունը տարածքային մարմնից ստացած որոշումների հիման վրա համակարգում է տուն-ինտերնատներ հաճախորդների ընդունելության գործընթացը:

ՀՀ աշխատանքի
եւ սոցիալական հարցերի նախարարության

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների ապահովման, խթանման ու պաշտպանության եւ սոցիալական ներառման համակարգի ֆինանսավորումն իրականացվում է՝

1) պետական բյուջեի միջոցներից,
2) համայնքի բյուջեի միջոցներից,
3) իրավաբանական եւ ֆիզիկական անձանց հատկացրած միջոցներից,
4) օրենսդրությամբ չարգելված այլ միջոցներից:

ԿՐԹԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ինձ հետաքրքրում է, թե մշակութային արժեքների փորձագիտական գնահատման ինչ կարգ է գործում Հայաստանի Հանրապետությունում:

Նաիրա Վարդանյան (31 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Մշակութային արժեքների եւ մշակութային նշանակության առարկաների արվեստաբանական ու մշակութաբանական փորձաքննությունն իրականացնում է «Մշակութային արժեքների փորձագիտական կենտրոն» ՊՈԱԿ-ը: Փորձաքննության շահառուներ են հանդիսանում ՀՀ եւ օտարերկրյա քաղաքացիները եւ իրավաբանական անձինք, այդ թվում՝ ՀՀ պետական մարմինները: Փորձաքննությունն իրականացվում է ներկայացված դիմումի կամ հանձնարարության հիման վրա: Ֆիզիկական անձանց դեպքում գործընթացի սկիզբ է համարվում վերջիններիս կողմից կենտրոնի հայտագրման բաժին դիմում ներկայացնելը, իսկ իրավաբանական անձանց դեպքում՝ գրության հրամանի, հանձնարարության, որոշման եւ փորձաքննության ենթակա իրի կամ իրերի եւ դրանց լուսանկարների տրամադրումը: Փորձաքննության առավելագույն ժամկետ է համարվում 15 օրը, բացառությամբ կողմերի համաձայնությամբ որոշակի ժամկետով երկարաձգելու դեպքերի: Կենտրոնը փորձաքննությունն իրականացնում է 28 ոլորտներում: Փորձաքննության արդյունքում հայտատուին տրամադրվում է համապատասխան փորձագիտական եզրակացություն: Փորձաքննության դիմաց հայտատուն կատարում է վճարներ՝ «Մշակութային արժեքների արվեստաբանական եւ մշակութաբանական փորձաքննության, ինչպես նաեւ իրականացվող այլ ծառայությունների վճարների գանձման մասին» կարգին համապատասխան:

ՀՀ կրթության, գիտության,
մշակույթի եւ սպորտի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Հայաստանի Հանրապետության տարածքից արգելվում է արտահանել մշակութային ժառանգության առանձնակի արժեքավոր մշակութային արժեքները՝ անկախ դրանց ստեղծման ժամանակից կամ պատկանելությունից:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Երեւանում



Երեւանյան գազաբալոնների կայաններից մեկում արված այս լուսանկարը հումորային ու զվարճալի է: Ստացվում է, որ վարպետն առաջարկում է հատուկ ծառայություններ հատուկ գներով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ ԱՆՎՃԱՐ:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ ____________
Ազգանուն՝ ____________
Առաքման հասցե՝ ____________
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ ____________

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **2.08.2022**
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Համբարձումյան 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, Գ նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: